

ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ

ՂԱՐԱԲԱՂ

Ղարաբաղի լեռնոտ աշխարհ,
Քարապատնէշ, քարակարկառ,
Երկինքներէն իջած կարծես,
Հսկայածեւ զանգի նըման:
Հերոսներու տուն, տաղաւար,
Դաւիթ Պէկի, մելիքներու
Արիւններէն դեռ չըջորցած,
Անցեալ մ'ամբողջ,
Որուն քարին, պատին ներքեւ
Կը պառկին դեռ,
Անմըխիթար հերոսներն մեր:

Մըտիկ ըրէք անոնց ձայնին,
Ձայնը խորունկ հայ դարերուն,
Որ կը կոտտայ,
Հազարամեայ վերքի մը պէս:
Մըտիկ ըրէք անոնց ձայնին,
Ինչպէս ճամբորդն ուղեկորոյս,
Խորն անտառին:
Լեռներն կանչն են ազատութեան,
Յուշարձաններ՝
Մագաղաթներ, գիրէն առաջ,
Որոնց գըլխուն՝ արեւ, լուսին
Կը փայլակեն,
Ժամանակի խորհուրդն անհաս:

Հին Արցախի մելիքներու
Սերունդն անմահ,
Ձեր ժայռերու շուքին նստած
Ի՞նչ կը խոկաք.
Ոտքի՛ ելէք, մէկով-հազար,
Թող չկարծեն թըշնամիներն
Ձեր փոքր ու մեծ, թէ ձիւներէն
Առաջ նըստեր է ձեր սրտին՝
Մահն վաղաժամ:
Հողին վրայ ձեր սեփական,
Վըտարանդի եղած էք արդ,
Յառած նայուածքն ձեր անըստոյգ
Հորիզոնին:

Կ'ուզէք ապրիլ ձեր օրն ազատ,
Բայց չէք ուզեր
Ըլլալու թամբ ուրիշին տակ,
Եթէ կոշուիք իսկ ապստամբ:
Ազատութեան իրաւունքէն
Ի՞նչ կայ աւելի թանկ,
Եթէ նոյնիսկ իր հետքերէն
Մահն ընթանայ,
Ու ժամանակն խանձարուրէ
Ինչպէս պատանք:

Ղարաբաղի հայորդիներ,
Ունեցէ՛ք սէրը ձեր հողին,
Ոչ թէ տժգոյն յուշի նըման,
Այլ տեսիլքի պէս լուսավառ:
Մի՛ թողուք զայն բախտին լըքուած
Անտէր կալուած:
Հայու նման կանգնեցէք դուք
Այս աշխարհի խիղճին վրայ,
Իբրեւ ձայնը արդարութեան,
Ազատութեան իբրեւ արձան:

Մի՛ նահանջէք
Իրաւունքէն հայրենական,
Նահանջը լաց է ու կոտորած.
Ժողովուրդ մը որ չունի հողն
Իր սեփական,
Առանց մօրն այդ ծնընդական,
Փռչի է լոկ,
Ժամանակի ափին մէջ բաց:
Կարմիր, կապոյտ, նարընջագոյն,
Հոգին Հայուն,
Իր արիւնին նման կարմիր,
Երկինքին պէս կապոյտամոյն,
Եւ դեղնորակ ինչպէս ոսկին
Կը սարսուռայ,
Սիրտերու մէջ հազարներու
Բոցանըման:

Լեռները ձեր՝
 Գերեզմաններ են սուրբերու,
 Հերոսներու վրկայարան:
 Յիշէ՛ք միշտ
 Աւարայրն ու Սարգարապատն
 Հէքիաթացած,
 Երբ Հայ աշխարհն այդ օրերուն,
 Դարձաւ ամբողջ,
 Զանգակատուն հազարական:
 Ձեր հայրերուն նըման արի,
 Տէր եղէք ձեր իրաւունքին,
 Ժառանգութեան,
 Սուրբ աւանդն այդ առհաւական,
 Պէտք է արին եւ միս դառնայ,
 Հանգի խորհուրդն ապագային,
 Զի Հայ ըլլալ
 Պատգամ է եւ ճակատագիր,
 Դարերու դէմ պարզուած դրօշ
 Արինավառ:

Ունիք այսօր կըտոր մը հող
 Սիրտի մը չափ,
 Ձեր ձեռքերէն ոչ ոք կըրնայ
 Ապշոպել զայն,
 Ան հըրիտակն է ձեր նախնեաց:
 Եւ Սասունցի Դաւիթին պէս
 Մեր օրերու,
 Մըսրայ պետին առջեւ կանգնած,
 Ըսէք խըրոխտ,
 Թէ կենդանի էք յաւիտեան,
 Ու կը մընաք,
 Վասընզի ձեր երականէն
 Արինն արդար մեր Նախահօր,
 Կը փըրփըրի բոցակայլակ,
 Դրօշն ինչպէս ազատութեան:

ԵՂԻՎԱՐԴ

ԲԵԹՂԵՀԷՄ

«Եւ դո՛ւ, Բեթղեհէմ, տուն Եփրաթայ, սակա-
 ւաւորս իցես լինել ի հազարաւորս Յուդայ...»:

Է՛ն հրաշալին անուններուն Սուրբ Գըրոց,
 Որ մեզ տուաւ մանկութիւն մը գերազանց,
 Մերկ մսուրը եւ անպաճոյճ օրօրոց,
 Ու առաջին համանուագն հրեշտակաց,

Զոր հովիւներ աւետաւոր գիշերուան
 Աստղերուն տակ մաքուր սրտով երգեցին,
 Իբր նախերգանք մարդկային մեծ հաճութեան,
 Եւ փառքին ալ՝ յաւերժակա՛ն Բարձունքին:

Գիշերուան մէջ այս՝ թրթըռո՛ւն Քու սիրով,
 Տիեզերքի եղբայրութիւնն անանուն,
 Մսուրիդ դէմ ծունկի բե՛ր, Տէ՛ր, քովէ՛քով,

Եւ տարածէ՛ հողին, օդին ու ծովուն
 Սահմաններուն, Քեզմով լեցուած անսահման
 Սուրբ մեղեդին Քու հրաշագան Յայտնութեան:

ՀՄԱՅԵԱԿ ԳՐԱՆԵԱՆ

Բեթղեհէմ, 6 Յունուար, 1908